Պարոն Ա. Ուլիխանյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

*Ա. Սաֆարյան*_____

«12» 03 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Լուսինե Հովհաննիսյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Բրատիսլավա, Սլովակիա, 2024թ թվականի մարտի 6-9-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման կոմիտեի աշխատանքային խմբի հերթական նիստին մասնակցություն:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիան հանդիպման առաջին օրը նախատեսել էր էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման կոմիտեի և վերականգնվող էներգետիկայի ու էներգաարդյունավետության կոմիտեի համատեղ նիստ: Նիստի բացման խոսքով հանդես եկան կոմիտեների նախագահները՝ Օմանի հանրային ծառայությունները կարգավորող մարմնի տնտեսական և ֆինանսական հարցերով տնօրեն

Հասան Թաքին և Ավստրիայի կարգավորող մարմնի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության հարցերով տնօրեն Հարալդ Պրիոտին: Մասնակիցներին ողջունեց նաև Սլովակիայի կարգավորող մարմնի նախագահ Ժոզեֆ Հոլջենչիկը:

«Optima Energy Consulting» ընկերության փորձագետը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով էներգահամակարգի ճկունության մարտահրավերները ածխաթթվացման, վերականգնվող էներգետիկայի փոփոխական աղբյուրների և էլեկտրիֆիկացման մեծացման համատեքստում: Հաջորդիվ քննարկվեցին առաջարկի և պահանջարկի ճկունության տարբերակները, ապա կարգավորողների գործիքակազմերը՝ ուղղված բաշխիչ ցանցի թողունակության հետ կախված խնդիրները լուծելուն, ճկունության հասանելիության տարբերակները (պայմանագրեր, բաշխման սակագներ և ճկունության մրցակցային գնումներ): Անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային շուկաների ձևավորման մոտեցումների մարտահրավերներին և հնարավորություններին՝ էլեկտրական էներգիայի սակագների աճի և վերականգնվող էներգիայի խթանման տեսանկյունից: Սպառողներին անվտանգ, կայուն և մատչելի էլեկտրական էներգիայի մատակարարման ապահովումը պահանջում է էներգետիկ շուկայի ինտեգրում՝ միջսահմանային առևտրի խոչընդոտները վերացնելու և ընդհանուր էներգետիկ շուկայի կանոնները պահպանելու միջոցով: Ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնվազեցնի ցանկացած երկրի էներգետիկ անկայունությունը և կախվածությունը, քանի որ մի երկրում արտադրված էլեկտրական էներգիան կարող է մատակարարվել մեկ այլ երկրի սպառողին: Ավելին, ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնպաստի երկրների վերականգնվող էներգետիկայի ներուժի լիարժեք օգտագործմանը, ինչը կհանգեցնի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժնի ավելացմանը էլեկտրաէներգիայի վերջնական սպառման մեջ:

Լատվիայի կարգավորող մարմնի խորհրդի անդամ Գատիս Յունգանսը հանդես եկավ զեկույցով՝ հաշվեկշռման շուկաների մոդելներ և Բալթյան երկրների հաշվեկշռման ճանապարհային քարտեզ թեմայով: Հունգարիայի և Հունաստանի կարգավորող մարմինների ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին նաև էներգիայի պահեստավորման հունգարական փորձը և պահանջարկի ճկունության համար մի շարք օժանդակ ծառայությունների շուկաների բացման հունական փորձը: Հաջորդիվ, կազմակերպվեց պանելային քննարկում Լատվիայի, Լիտվիայի, Հունգարիայի և Հյուսիսային Մակեդոնիայի կարգավորող մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

7.Հանդիպումները, ելույթները՝

Նիստի երկրորդ օրը ելույթով հանդես եկավ Սլովակիայի կարգավորող մարմնի նախագահը՝ ներկայացնելով Սլովակիայի էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորման վերջին զարգացումները: Զեկույցով հանդես եկավ նաև Սլովակիայի էլեկտրաէներգետիկական հաղորդող ընկերության ներկայացուցիչը՝ ներկայացնելով էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացումները հաղորդողի տեսանկյունից:

Հաջորդիվ, աշխատանքային խմբի մասնակիցների կողմից քննարկվեց Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) 2024-2026թթ. գործունեության ծրագիրը, մասնակիցների կողմից ներկայացվեցին առաջարկություններ, որոնք անհրաժեշտության դեպքում կներառվեն կազմակերպության գործունեության ծրագրի լրամշակված տարբերակում:

Նիստի երկրորդ օրը նախատեսված էր նաև կոմիտեի աշխատանքային խմբի մասնակիցների կողմից հանդեզ գալ զեկույցով՝ յուրաքանչյուր երկրում էլեկտրաէներգետիկական շուկաների գործունեության առկա իրավիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ: Կլոր-սեղան քննարկմանը զեկույցով հանդես եմ եկել նաև ես՝ ներկայացնելով ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատական մոդելը, մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերը (էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոններ, օֆերտայի պայմանագրի օրինակելի ձև, հաղորդման և բաշխման ցանցային կանոններ), շուկայի սեգմենտները: Ներկայացրել եմ Կարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում, Չկարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում, Օր-առաջ շուկայում և Հաշվեկշռման շուկայում իրականացվող առևտրի մեխանիզմները: Միաժամանակ, ներկայացրել եմ էլետրաէներգետիկական շուկայի ազատականացման համատեքստում հանձնաժողովին վերապահված գործառույթներին լրացված, ըստ էության, ամբողջովին նոր ինստիտուցիոնալ գործառույթի՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մոնիտորինգի էությունը, որի շրջանակում հանձնաժողովն իրական ժամանակում հետևում է շուկայում տեղի ունեցող ամենժամյա առևտրին և դրա շրջանակում կնքվող գործարքների՝ շուկայի կանոններին համապատասխանությանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացումների վերաբերյալ էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման կոմիտեի

աշխատանքային խմբի հերթական նիստին հնչած ելույթների և քննարկումների արդյունքները՝

✓ Ակտիվ համագործակցել խմբի անդամ պետությունների ներկայացուցիչների հետ՝ հաշվեկշռման շուկաների ներդրման և գործարկման ուղղությամբ, ինչպես նաև ուսումնասիրել Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի օրական հատվածի ներդրման հնարավորության հարցը,

✓ Վրաստանի կարգավորող մարմնի հետ համագործակցության շրջանակներում ուսումնասիրել ԵՄ գործիքների (TWINING, TAIEX, SYGMA) օգտագործմամբ էլեկտրաէներգետիկական տարածաշրջանային շուկաների փոխկապակցման հնարավորությունը,

✓ Առաջիկայում դիտարկել Վրաստանի կարգավորող մարմնի հետ համատեղ հանդիպում կազմակերպելու հնարավորությունը՝ շուկաների փոխկապակցմանն և միջպետական առևտրի խթանմանն առնչվող օրակարգով,

✓ Պարբերաբար մասնակցել կոմիտեի նիստերին՝ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ներկայիս փուլում տեղում ծանոթանալ միջազգային պրակտիկային, ուսումնասիրել տարբեր երկրների պատվիրակների կողմից ներկայացվող էլեկտրաէներգետիկական շուկայի տարբեր հատվածներում (օր-առաջ, հաշվեկշռվող շուկաներում) առաջացող պրակտիկ խնդիրները:

Կոմիտեի հերթական նիստի օրակարգը, ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի են https://erranet.org/emer-com-meetings/ հղումով: Միաժամանակ, կից ներկայացնում եմ իմ կողմից նիստին ներկայացված ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացումների վերաբերյալ ելույթը և համապատասխան սահիկաշարը:

Գործուղվող ---------- 12.03.2024թ. ---- ***L. Հովհաննիսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Պարոն/Տիկին [signature] *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան [signature]

« 12 » 03 *2024թ.*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը-Մոմջյան Մարիամ.

2. Զբաղեցրած պաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները- Սլովակիա, քաղաք Բրատիսլավա, 2024 թվականի մարտի 6-ից 9-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)- Եվրոպական էներգետիկ կարգավորողների ասոցացիա (ERRA).

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Եվրոպական էներգետիկ կարգավորողների ասոցացիայի բնական գազի կոմիտեի 19-րդ հանդիպմանը մասնակցություն.

6. Քննարկված թեմաները (հարցերը).

Եվրոպական էներգետիկ կարգավորողների ասոցացիայի բնական գազի կոմիտեի 19-րդ հանդիպմանը (07.03.2024թ.-08.03.2024թ.) քննարկվեցին կոմիտեի վերակազմավորման անհրաժեշտությունը, 2024-2026թթ. աշխատանքային ծրագրի նոր ձևաչափով ներկայացման մանրամասները, դրանում ներառված (ներառվող) թեմաների ներկայացման և աշխատանքային ծրագրում ներառման չափորոշիչները, բնական գազի ոլորտում թվայնացման գործընթացներին, սակագների կառուցվածքին, սուբսիդավորմանը, բաշխիչ համակարգում բիոմեթանի տեղափոխմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև մասնակիցները ներկայացրեցին կոմիտեի անդամ երկրներում գազի բնագավառում առկա թարմացումները:

Մասնավորապես,

1) հաշվի առնելով վերականգնվող գազի աճող տարածումը ԵՄ անդամ երկրներում, դրանց կարգավորման լայն շրջանակները՝ ներկայացվեց վերականգնվող գազի ոլորտում կարգավորումների Ավստրիայի փորձը,
2) անդամ երկրները ներկայացրեցին գազի շուկայի ազատականացման գործընթացները, մասնավորապես ուսանելի էր Թաիլանդի փորձը, որն անցնում է LNG գազի շուկայի ազատականացման գործընթացներով,
3) ՌԴ-ից գազի ներմուծման արգելքների կիրառման պարագայում գազի ենթակառուցվածքները բիոմեթանի տեղափոխման նպատակով օգտագործելու դժվարությունները և հեռանկարները,
4) անդամ երկները ներկայացրեցին ջեռուցման նպատակներով բիոգազի կիրառումը խթանելու իրենց երկների գործիքակազմը,
5) մանրամասն ներկայացվեցին անդամ երկրներում բնական գազի արտադրական, սպառողների հետ հարաբերությունների կառավարման, կորուստների կրճատման և այլ գործընթացնելում թվային գործիքակազմի կիրառման փորձը, խնդիրները և հեռանկարները,
6) տարբեր երկրներում բնական գազի կառուցվածքը, դրա վրա ազդող գործոնները, կարգավորման ենթակա սպառողական խմբերը,
7) հանդիպման մասնակից բոլոր երկրները ներկայացրեցին բնական գազի ոլորտում օրենսդրական նախաձեռնությունները, կարգավորման իրավական ակտերի լրամշակման գործընթացները, դրանց նպատակը և լուծվող խնդիրները:

7. Հանդիպումները, ելույթները.–Հանդիպմանը հանդես եմ եկել 2 ելույթներով՝ ներկայացնելով 2 շնորհանդես՝ ՀՀ-ում բնական գազի ոլորտում խթանիչ սակագնային քաղաքականության առանձնահատկությունները և ՀՀ բնական գազի ոլորտում վերջին զարգացումները թեմաներով:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.–

1) Հաշվի առնելով վերականգնվող գազի աճող տարածումը և կարևորությունը բնական գազի կոմիտեն վերակազմակերպել գազանման վառելիքաէներգետիկ ռեսուրսների կոմիտեի,

2) հաստատել 2024-2026թթ աշխատանքային ծրագրի ձևաչափը և մասնակից երկներին հանձնարարաել ներկայացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաներ,

3) ներկայացնել անդամ երկների համար հետազոտական աշխատանքի մասնակիցների թեկնածություններ և նախագծել դրա կառուցվածքը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Հաշվի առնելով բնական գազի սակագների կառուցվածքի միջազգային փորձը՝ ՀՀ համար հետաքրքրություն կարող են ներկայացնել մասնավորապես Լիտվայի փորձը, երբ որոշակի միջակայքի սպառման համար կիրառվում են սեզանային ճշգրտվող սակագների համակարգը: Միաժամանակ, ՀՀ-ի համար կարևոր է նաև բնական գազի ոլորտում ներդրումային ծրագրերում թվայնացմանն ուղղվող միջոցառումներին ուշադրություն դարձնելը, որոնք կվերաբերեն ինչպես սպառման հեռավար կառավարմանը, այնպես էլ արտադրա-տեխնոլոգիական գործընթացների թվայնացմանը:

Գործուղվող ---------- 12.03.2024թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

Պարոն/Տիկին Մ. Մուրադյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անունն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

« 12 » 03 *2024թ.*

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը-Դավիթ Մուրադյան.

2. Զբաղեցրած պաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները- Սլովակիա, քաղաք Բրատիսլավա, 2024 թվականի մարտի 6-ից 9-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)- Եվրոպական էներգետիկ կարգավորողների ասոցացիա (ERRA).

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Եվրոպական էներգետիկ կարգավորողների ասոցացիայի կոմիտեների համատեղ և վերականգնվող էներգետիկայի ու էներգաարդյունավետության կոմիտեի հանդիպումներին մասնակցություն.

6. Քննարկված թեմաները (հարցերը).

Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիան հանդիպման առաջին օրը նախատեսել էր էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման կոմիտեի և վերականգնվող էներգետիկայի ու էներգաարդյունավետության կոմիտեի համատեղ նիստ: Նիստի բացման խոսքով հանդես եկան կոմիտեների նախագահները՝ Օմանի հանրային ծառայությունները կարգավորող մարմնի տնտեսական և ֆինանսական հարցերով տնօրեն Հասան Թաքին և Ավստրիայի կարգավորող մարմնի

վերականգնվող էներգետրկայի և էներգաարդյունավետության հարցերով տնօրեն Հարալդ Պրիոտին: Մասնակիցներին ողջունեց նաև Սլովակիայի կարգավորող մարմնի նախագահ Ժոզեֆ Հոլջենչիկը:

«Optima Energy Consulting» ընկերության փորձագետը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով էներգահամակարգի ճկունության մարտահրավերները ածխաթթվացման, վերականգնվող էներգետիկայի փոփոխական աղբյուրների և էլեկտրիֆիկացման մեծացման համատեքստում: Հաջորդիվ քննարկվեցին առաջարկի և պահանջարկի ճկունության տարբերակները, ապա կարգավորողների գործիքակազմերը՝ ուղղված բաշխիչ ցանցի թողունակության հետ կախված խնդիրները լուծելուն, ճկունության հասանելիության տարբերակները (պայմանագրեր, բաշխման սակագներ և ճկունության մրցակցային գնումներ): Անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային շուկաների ձևավորման մոտեցումների մարտահրավերներին և հնարավորություններին՝ էլեկտրական էներգիայի սակագների աճի և վերականգնվող էներգիայի խթանման տեսանկյունից: Սպառողներին անվտանգ, կայուն և մատչելի էլեկտրական էներգիայի մատակարարման ապահովումը պահանջում է էներգետիկ շուկայի ինտեգրում՝ միջսահմանային առևտրի խոչընդոտները վերացնելու և ընդհանուր էներգետիկ շուկայի կանոնները պահպանելու միջոցով: Ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնվազեցնի ցանկացած երկրի էներգետիկ անկայունությունը և կախվածությունը, քանի որ մի երկրում արտադրված էլեկտրական էներգիան կարող է մատակարարվել մեկ այլ երկրի սպառողին: Ավելին, ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնպաստի երկրների վերականգնվող էներգետիկայի ներուժի լիարժեք օգտագործմանը, ինչը կհանգեցնի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժնի ավելացմանը էլեկտրաէներգիայի վերջնական սպառման մեջ:

Վերականգնվող էներգիայի տեսանկյունից ևս մեկ անգամ կարևորվեց երկրների էներգետիկ անվտանգության նպատակով վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացումը, ինչը սակայն իր հերթին ևս ռիսկեր է իր մեջ պարունակում ինչպես ցանցի կարգավարման, այնպես էլ սակագնի վրա ազդեցության տեսակյունից: Քննարկվեցին նաև էլեկտրաէներգիայի պահուստավորման, ջրածնային էներգիայի զարգացման հնարավորությունները և այլն:

7. Հանդիպումները, ելույթները.– վերականգնվող էներգետիկայի ու էներգաարդյունավետության կոմիտեի հանդիպման ժամանակ ներկայացրել եմ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտում վերջին զարգացումները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.–

1) քննարկվեց էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) 2024-2026թթ. գործունեության ծրագիրը, մասնակիցների կողմից ներկայացվեցին առաջարկություններ, որոնք անհրաժեշտության դեպքում կներառվեն կազմակերպության գործունեության ծրագրի լրամշակված տարբերակում:

2) Քննարկվեց նաև վերականգնվող էներգետիկայի ու էներգաարդյունավետության կոմիտեն էներգետիկ փոխակերպման կոմիտեի վերակազմակերպելու հարցը՝ հաշվի առնելով ոլորտի զարգացման վերջին միտումները, ու առաջարկվեց ևս մեկ անգամ վերանայել նոր կոմիտեում քննարկվելիք հարցերը:

Գործուղվող ---------- 12.03.2024 ----------

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 095-ԳՔ, 20.02.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ՝
Մոմջյան Մարիամ,
Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ՝
Հովհաննիսյան Լուսինե ,
Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ **Մուրադյան Դավիթ** ,

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը Բրատիսլավա / Սլովակիա /

5. Գործուղման ժամկետները 06.03.2024 - 09.03.2024թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(***թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն***)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս , գիշերավարձ և

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Մոմջյան Մարիամ*	*Հովհաննիսյան Լուսինե*	*Մուրադյան Դավիթ*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	224,758.00	224,758.00	224,758.00	674.274
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)	140,403.36	140,403.36	140,403.36	421.210
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	68	68	68	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	29,692.20	29,692.20	29,692.20	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	118,769	118,769	118,769	356.306
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	22,031.85	22,031.85	22,473.37	66.537
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		505.962	505.962	506.404	1,518.328

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,
(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

14.03.2024թ.